ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12, 1961 Общественные науки

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ[1]

Վերջին տարիներին Հայաստանում պատմական գիտությունը զգալի առաջընթաց կատարեց՝ բացահայտելու 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի ռևոլյուցիոն մտքի զարգացման, բոլշևիկյան կազմակերպությունների գործունեության և աշխատավորական մասսաների ռևոլյուցիոն պայքարի հարցերը։ Վերոհիշյալ շրջանի հարցերով զբաղվող մեր պատմաբանները իրենց ուժերը առավելապես դրսևորել են ռուսական առաջին ռևոլյուցիայի, ինչպես նաև Հայաստանում սովետական կարգերի հաստատման ժամանակաշրջանի պրոբլեմների գիտական մշակման բնագավառում։ Մի շարք պատճառներով նրանց ուշադրությունից կարծես թե վրիպել էր մի այնպիսի կարևորագույն պատմական ժամանակաշրջան, ինչպիսին է ռուսական առաջին ռևոլյուցիայի պարտությունից մինչև Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակը ընկած տասնամյա ժամանակաշրջանը։ Այդ էտապը ինչպես ամբողջ Ռուսաստանում, այնպես էլ Հայաստանում, մեր պարտիայի գործունեության թերևս դժվարագույն ժամանակաշրջանն է։

Պատմական նման ժամանակաշրջանի մասին լիարժեք գիտական աշխատություն գրել՝ նշանակում է լավատեղյակ լինել բոլշևիկների ստրատեգիային և տակտիկային, Անդրկովկասի նման խայտաբղետ ազգային կազմ և հասարակական մտքի բազմազան հոսանքներ ու երանգներ ունեցող երկրամասի կյանքին, հմուտ լինել օգտվելու պատմական սուղ նյութից։

Հայպետհրատը շնորհակալ գործ է կատարել հրատարակելով Մ. Վ. Արզումանյանի «Բոլշևիկների գործունեությունը և ռևոլյուցիոն շարժումը Հայաստանում 1907—1917 թվականներին» աշխատությունը։

Հեղինակին հաջողվել է Մոսկվայի, Լենինգրադի, Երևանի, Թբիլիսիի, Բաքվի պետական ու պարտիական արխիվներում հայտնաբերած նյութերի, բոլշևիկյան մամուլի, հրապարակում եղած գրականության ուսումնասիրության շնորհիվ ստեղծել մի աշխատություն, ուր համակողմանի քննարկման են ենթարկված վերոհիշյալ տասնամյակի բովանդակությունը կազմող կարևորագույն հարցերը։

Աշխատությունը ամենից առաջ գնահատելի է նրանով, որ այն առավելապես գրված է արխիվային նոր նյութերի հիման վրա, կամ էլ նրանում ի մի է բերված մինչ այդ հայտնի նյութը, որը ցրված է եղել այս կամ այն կոնկրետ հարցի քննարկման առնչությամբ։ Նոր նյութերի հիման վրա լուսաբանվել է բոլշևիկների գործունեությունը և ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում՝ ստոլիպինյան ռեակցիայի, ռևոլյուցիոն նոր վերելքի և առաջին համաշխարհային պատերազմի տարիներին։ Գիտական արժեք են ներկայացնում նաև այնպիսի հարցերի քննարկումը, ինչպիսիք են 1) բոլշևիկների վերաբերմունքը հայկական հարցի նկատմամբ, 2) տվյալ ժամանակաշրջանում բոլշևիկների դումայական տակտիկան և նախընտրական կամպանիան, որոնք բացահայտված են Կովկասյան և հայկական նյութի հիման վրա, 3) առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովրդի պատմության հարցերը, 4) կամավորական շարժումը, 5) հայկական ջարդը և այլն։

Հեղինակին հաջողվել է նյութեր ստանալ նաև Գերմանիայի միացյալ Սոցիալիստական պարտիայի Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտից, նյութեր, որոնք բացահայտում են առաջին համաշխարհային պատերազմի շրջանում հայկական ջարդերի նկատմամբ գերմանական իմպերիալիզմի վարքագիծը և այդ վարքագծի նկատմամբ Գերմանիայի լավագույն զավակների, մասնավորապես Կարլ Լիբկնեխտի վերաբերմունքը։ 1916 թ. հունվարի 11-ին Կ. Լիբկնեխտը Ռայխստագում հարցում արեց Գերմանիայի Ռայխսկանցլերին, թե «Արդյոք պարոն Ռայխսկանցլերին հայտնի է, որ ներկա պատերազմի ժամանակ ոսմանյան թուրքական պետության մեջ հայ բնակչությունը հարյուր-հազարներով քշվել է իր բնակավայրերից ու կոտորվել։ Ինչ քայլեր է արել պարոն Ռայխսկանցլերը դաշնակից թուրքական կառավարության մոտ, որպեսզի անհրաժեշտ հատուցում տրվի, հայ բնակչության մնացորդի դրությունը Թուրքիայում մարդավայել կերպով կազմակերպվի և նման սարսափների կրկնությունը արգելվի» (էջ 444)։

---

1 Մ. Վ. Արզումանյան, Բոլշևիկների գործունեությունը և ռևոլյուցիոն շարժումը Հայաստանում 1907—1917 թվականներին, Հայպետհրատ, Երևան, 1959։

Մեր պատմական գրականության մեջ առաջին անգամ ամփոփ շարադրանք է ստացել Անդրկովկասում և Հայաստանում ռազմա-արդյունաբերական կոմիտեների ստեղծումը և նրանց գործունեության լուսաբանումը։ Նոր փաստեր կան Կովկասյան ռազմաճակատում տեղի ունեցած զինվորական ոևոլյուցիոն և դեմոկրատական շարժման վերաբերյալ։

Մեր պատմական գրականության մեջ փաստորեն անց է կացվել այն տեսակետը, որ Հայաստանում տեղավորված զորամասերում բոլշևիկների գործունեության և ոևոլյուցիոն շարժման վերաբերյալ փաստերը վերաբերում են 1917 թվականի կեսերից հետո ընկած ժամանակաշրջանին։ Հեղինակը փաստերով ցույց է տալիս, որ ոևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիան Անդրկովկասում և Հայաստանում նույնպես ակտիվ աշխատանք է ծավալել պատերազմի հենց սկզբից։ Գրքում բերված մի շարք փաստեր են այդ մասին խոսում։ Այսպես, օրինակ, Երևանի Նահանգական ժանդարմական վարչության պետը 1914 թվականի սեպտեմբերի 12-ին զեկուցում է ոստիկանության դեպարտամենտին, որ Կարսի երկաթգծում, ինչպես նաև Կարսի զորամասերում ու հոսպիտալում, հայտնաբերվել են սոցիալ-դեմոկրատական թռուցիկներ, որտեղ «քաղաքացիներին» ու «ընկեր զինվորներին» կոչ է արվում՝ զենքն ուղղել ցարական ինքնակալության դեմ, որովհետև նա է իրենց բոլոր տառապանքների պատճառը և կողոպտիչ պատերազմի հրահրողներից մեկը։ Հեղինակը վկայակոչում է նաև Իգդիրում տեղի ունեցող ոևոլյուցիոն շարժման նմանօրինակ փաստ։ Ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիան ակտիվորեն էր գործում մասնավորապես Ալեքսանդրապոլում տեղավորված զորամասերում։ Հետաքրքրական է հեղինակի կողմից բերված այն փաստը, որ 1916 թվականի մայիսին Ալեքսանդրապոլի փողոցներում ոստիկանությունը հայտնաբերեց հակապատերազմական թռուցիկ, որտեղ զինվորների անունից ասված էր՝ «Բավական է արյուն թափել։ Կորչի պատերազմը։ Կառավարությունը և ոչինչ չանող մարդիկ գոչում են պատերազմ մինչև հաղթանակ։ Թող նրանք դան այստեղ, մեր տեղերը նստեն սոված և այն ժամանակ թող ասեն՝ պատերազմ մինչև հաղթանակ»։ Հեղինակը բազմաթիվ նոր փաստեր է բերում պատերազմի սկզբից մինչև Փետրվարյան ոևոլյուցիան ընկած ժամանակաշրջանում Հայաստանում գտնվող ցարական և դաշնակցական-«կամավորական» զորամասերի բայքայման վերաբերյալ։

Աշխատության մեջ որոշ տեղ է հատկացված Կովկասյան ռազմաճակատում գործած աչքի ընկնող բոլշևիկներ Մ. Ս. Կեդրովի, Ալ. Ջափարիձեի, Գր. Կորգանովի, Ստ. Ալավերդյանի, Հովհ. Սարուխանյանի, Հայկ Հովսեփյանի, Ա. Վարդապետյանի, Սուրեն Հովսեփյանի, Ալ. Շահսուվարյանի գործունեությանը։ Աշխատությունը անկասկած կշահեր այդ բանի ավելի խորը փաստերից վերլուծությունից։

Հեղինակը տվյալ ժամանակաշրջանում բոլշևիկների գործունեությունը և աշխատավորների ոևոլյուցիոն շարժման հարցերը լայնորեն շարադրում է համառուսական իրականության, Անդրկովկասում տեղի ունեցող քաղաքական սուր պայքարի, հասարակական մտքի գոյություն ունեցող վիճակի, նրա զարգացման, ինչպես նաև հայ ժողովրդի այդ շրջանի քաղաքացիական պատմության ֆոնի վրա։

Հեղինակը Հայաստանի բոլշևիկների աշխատանքը չի կտրում Անդրկովկասյան բոլշևիկյան կազմակերպությունների և մասսաների ոևոլյուցիոն պայքարից։ Պայքարի միասնական նպատակը և համատեղ ոևոլյուցիոն աշխատանքը անդրկովկասյան բոլշևիկներին եռանդուն աշխատանքի էր մղում և նրանց կողմնորոշում գործելու ոչ թե տեղական, երբեմն մի փոքր ազգային շրջանակով սահմանափակված շրջանում, այլ ամբողջ Անդրկովկասում՝ ի շահ համառուսական պրոլետարական շարժման խորացման և նրա հաղթական վախճանի։ Պատահական չէ, որ անդրկովկասյան պրոլետարական և պարտիական խոշորագույն կենտրոնների՝ Բաքվի ու Թիֆլիսի բոլշևիկյան կազմակերպությունները պայքարի բոլոր էտապներում էլ անմիջականորեն ղեկավարել ու տոն են տվել Անդրկովկասի մյուս շրջանների, այդ թվում և Լոռու, Շիրակի, Ջանգեզուրի, Արարատյան դաշտի և հայկական այլ շրջանների աշխատավորների ոևոլյուցիոն պայքարին։

Ռուսական առաջին ոևոլյուցիան ջախջախելուց հետո ցարիզմը քաղաքական ու տնտեսական ուժավոր ռեակցիայի պայմաններում փորձեց խեղդել այն ամենը, ինչ առաջադիմական էր Ռուսաստանում։ Վ. Ի. Լենինի դիպուկ արտահայտությամբ ցարիզմը ոչ թե կառավարում էր երկիրը, այլ պատերազմ էր մղում աշխատավոր մասսաների դեմ։ Հարուստ նյութերի հիման վրա հեղինակը ցույց է տալիս, որ ցարական սատրապները, նրանց գլխավորած պատժիչ արշավախմբերը դաժանորեն դատաստան էին տեսնում նաև Անդրկովկասի աշխատավորների հետ, որոնք բոլշևիկների գլխավորությամբ մարտնչել էին ոևոլյուցիայի առաջավոր դիրքերում։ Ռեակցիան ամբողջ երկրում ծավալվում էր մեծապետական շովինիզմի սանձարձակ քաղաքականության պայմաններում։ Ավելի ուժեղացան ազգային ճնշումն ու ազգային թշնամանքը, սաստկացան հայ ժողովրդի նկատմամբ կիրառվող հալածանքն ու խտրականությունը։ Մայր առավ նաև

իդեոլոգիական ռեակցիան, որն իր մեջ առավ նաև հայկական ինտելիգենցիայի մի մասին։ Երևանում հրատարակվող «Միտք» ժողովածուն «Вехи» ժողովածուի հայկական վարիանտը հանդիսացավ, որի մեջ ծվարեցին մի խումբ հայ մախիստներ և իրենց ռուսական հոգևոր հայրերի հետ մեկտեղ ծառայության գրվելով ցարիզմին ու բուրժուազիային, սկսեցին կեղտաջուր թափել ռևոլյուցիայի կողմնակիցների բանակի վրա և ռևիգիայի ենթարկել մարքսիստական փիլիսոփայության հիմքերը։ Ռեակցիան բացասարար ազդեց նաև գեղարվեստական գրականության վրա։ Այդ փորձության ժամին անդրդվելի մնաց հայ պրոլետարական գրականության հիմնադիր Հակոբ Հակոբյանը, որը ռևոլյուցիոն շարժման բանակում Ստ. Շահումյանի և Ս. Սպանդարյանի դեկավարությամբ, Մ. Գորկու խորը ազդեցությամբ դարձավ ռևոլյուցիայի մարտիկ-բանաստեղծ։

Աշխատության մեջ համակողմանիորեն քննարկված են Անդրկովկասի, այդ թվում նաև Հայաստանի բոլշևիկների ակտիվ մասնակցությունը ռևիզիոնիստների, մենշևիկ լիկվիդատորների, օտզովիստների, աստվածաշինարարների, Տրոցկու հակապարտիական խմբի և այլ օպորտունիստների դեմ մղված պայքարին՝ հանուն պարտիայի անաղարտության և լենինյան միասնության։ 1908 թվականին Ստ. Շահումյանը գրում էր, որ «մենք ամբողջովին Իլյիչի կողմն ենք» և չնայած «աշխատանքի պայմանները» ...սոսկալի դժվարացել են, մեզ տառացիորեն խաչում են, ամեն կողմից թքակոծում են, ստորացնում... բայց մենք չենք վհատվում։ Հավատը դեպի ապագան և սերը դեպի մեր գործը անսպառ եռանդ է ներշնչում մեզ» (Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, էջ 41, 66, Երևան, 1957)։

Հեղինակը ցույց է տվել քննարկվող ժամանակաշրջանում Ալավերդում, Ղափանում, Երևանում, Ալեքսանդրապոլում, Հաղպատում, Նոր Բայազետում, Կարսում, Սարիղամիշում, Կաղզվանում, Իգդիրում գործող բոլշևիկյան կազմակերպությունների ու խմբերի գործունեությունը։ Այդ կազմակերպությունները օգտվում էին հնարավոր լեգալ և անլեգալ միջոցներից՝ աշխատավորների մեջ վառ պահելու ժամանակավորապես պարտված ռևոլյուցիայի անմահ գաղափարները, կազմակերպում էին նրանց ռևոլյուցիոն պայքարը։

Անդրկովկասի ու Հայաստանի բոլշևիկները նույնպես վարպետորեն էին օգտագործում այնպիսի լեգալ հնարավորություններ, ինչպիսիք էին Պետական Դումայի նախընտրական կամպանիան, կուլտուր-լուսավորական հիմնարկները, ապահովագրական դրամարկղները, արհմիությունները և այլն։

Բոլշևիկները նեանդուն գործունեություն էին ծավալում մամուլում։ Մեծագույն դժվարությունների և զոհողությունների գնով էր ստեղծվում ու կազմակերպվում բոլշևիկյան լրագրերի հրատարակման գործը։ 1907—1917 թթ. Անդրկովկասում տարբեր ժամանակներում հայերեն լեզվով լույս տեսան մասսաների ռևոլյուցիոն գիտակցությունը կազմակերպող և կուռող «Նոր խոսք», «Մեր խոսքը», «Խոսք», «Պայքար», «Բանվորի կոիվ», «Սոցիալ-դեմոկրատ» բոլշևիկյան լրագրերը։ Նրանցում տարբեր ժամանակներում ամենաակտիվ մասնակցություն էին ունենում Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Ալ. Մյասնիկյանը, Հ. Հակոբյանը, Ա. Ամիրյանը, Ա. Միկոյանը, Ա. Մռավյանը, Ս. Կասյանը, Ա. Կարինյանը, Ս. Հովսեփյանը, Ս. Խանոյանը, Ա. Խումարյանը, Բ. Բորյանը, Ա. Շահսուվարյանը և ուրիշներ։ Նրանցից շատերը ակտիվ մասնակցություն ունեին նաև լենինյան «Պրավդա»-ին։

Աշխատության մեջ հեղինակը զգալի տեղ է հատկացրել լենինյան «Պրավդա»-ում Անդրկովկասի և մասնավորապես հայկական իրականության հետ առնչվող հարցերի վերլուծմանը։ Առանձնապես արժեքավոր է այն բաժինը, ուր ցույց է տրվում «Հայկական հարցի» նկատմամբ «Պրավդա»-ի վերաբերմունքը։ «Պրավդան» Հայաստանի բոլշևիկների ձեռքին մի հզոր միջոց էր ճիշտ լուսաբանելու 1912—1914 թվականին նորից միջազգային դիվանագիտության խաղալիքը դարձած այդ կենսական խնդիրը։

Լայնորեն օգտագործելով «Պրավդա»-ում այդ հարցի առթիվ լույս տեսած մի շարք հոդվածներ, հեղինակը նշում է, որ բոլոր դեպքերում հայ ժողովրդի ազատագրումը թուրքական լծից կապված է այն սոցիալական միջավայրի ռևոլյուցիոն վերափոխման հետ, որի մեջ ապրում էր նա։ Այդ առնչությամբ հեղինակը նշում է, թե ինչպիսի անողոքությամբ էր քննադատում «Պրավդան» հայկական բուրժուա-նացիոնալիստական պարտիաներին ու հոսանքներին, որոնք բարբոքում էին նացիոնալիզմը և «հայկական հարցի» լուծումը ապավինում արևմուտքի իմպերիալիստական տերությունների խնամակալությանը։

Հեղինակը ցույց է տվել, որ չնայած ոստիկանական հետապնդումներին ու հալածանքներին, «Պրավդան» տարածվում էր նաև Անդրկովկասում ու Հայաստանում։ Բոլշևիկները և նրանց համախոհները այդ թերթի համարները հասցնում էին մինչև Երևան, Ալավերդի, Ղափան, Ալեքսանդրապոլ, Իգդիր, Կարս, Սարիղամիշ, Արդահան և այլն։ Նրա տարածման գործում ակտիվ

դեր էին կատարում երկաթուղայինները։ Ղամարլուում և Ջուլֆայում «Պրավդա»-ն ստացվում էր երկաթուղային Ա. Ջաչանիձեի միջոցով, որը հետո դարձավ բոլշևիկ։

Բոլշևիկների եռանդուն աշխատանքի շնորհիվ աշխատավոր մասսաների մեջ չի մարում ռևոլյուցիոն պայքարի հուրը։ 1905 թ. չլուծված խնդիրների լուծումը աշխատավորներին մղում էր նոր դոտեմարտերի՝ ընդդեմ ցարիզմի և բուրժուազիայի։ Հեղինակը ցույց է տալիս, որ Հայաստանում աշխատավորների ռևոլյուցիոն պայքարը չդադարեց անդամ սև ռեակցիայի տարիներին։ Այդ պայքարը ավելի աշխուժացավ ռևոլյուցիոն նոր վերելքի պայմաններում և հետագա տարիներին։ Շարժման մեջ էին ընդգրկվում Ղափանի, Ալավերդու, Ալեքսանդրապոլի, Երևանի, Կարսի, Կաղզվանի, Սիսիմաղանի, Կողբի և այլ վայրերի բանվորները, որոնց պայքարը երբեմն արտահայտվում էր նաև քաղաքական ցույցերի ձևով։ Լենայի դեպքերի արձագանքները Հայաստանում իրենց արտահայտությունները գտան Ղափանի և Ալավերդու բանվորների ելույթներում։ Գյուղացիական շարժման նշանավոր փաստերից էր Ջանգեզուրի գյուղացիների 1908 թ. գինված ելույթը՝ հանուն կալվածատիրական հողերի բռնագրավման։ Շարժման մեջ ընդգրկված գյուղացիներն ասում էին. «եթե կառավարությունը չի ուզում կալվածատերերից հողը խլել և մեզ՝ գյուղացիներիս հանձնել, ապա մենք պետք է ինքներս ուժով վերցնենք այն», «եկեք միանանք և դուրս քշենք ինչպես կալվածատերերին, այնպես էլ ռուսական չինովնիկներին» (Մի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 34, գ. 6, թ. 76)։ Ագրարային շարժումը իր մեջ ընդգրկեց նաև Երևանի, Էջմիածնի, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի և այլ գավառներ։ Աշխատավորների պայքարին համակրում և շարժման մեջ էին մտնում նաև Հայաստանում տեղավորված զինվորները։ Նրանց պայքարը հատկապես ուժեղացավ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին։ Ուսանողական խմբումներ էին տեղի ունենում Էջմիածնի հոգևոր ճեմարանում, որտեղ տարբեր ժամանակներում ակտիվորեն գործում էին Ա. Միկոյանը, Գ. Աթաբեկյանը, Ա. Հովհաննիսյանը և այլ բոլշևիկներ։

Մասսաների ռևոլյուցիոն ելույթները Անդրկովկասում և Հայաստանում հասցրին այն բանին, որ ցարական արխիռեակցիոն թերթերից մեկը գրում էր, թե Կովկասը՝ Ռուսաստանի այդ թանկագին ալմաստը, ձեռքից գնում է, որ «նա ապստամբության նախօրյակին է»։

Հեղինակը անհրաժեշտ խորությամբ բացահայտել է Կովկասյան բոլշևիկների հետևողական պայքարը՝ հանուն ազգային հարցի միակ ճիշտ, պրոլետարական լուծման։ Պետք է նշել, որ հայկական բուրժուական նացիոնալիզմի վերաբերյալ մեր պատմական գրականության մեջ մինչև այժմ չի եղել այնպիսի ամբողջական և համակողմանի քննադատություն, ինչպիսին այն տրված է Մ. Արզումանյանի ներկա աշխատության մեջ։ Գրքում կարմիր թելով անցնում է բոլշևիկյան կազմակերպությունների անհաշտ պայքարը ընդդեմ բուրժուական նացիոնալիզմի, որը ռևոլյուցիոն շարժման հասունացմանը զուգընթաց ավելի ու ավելի վտանգավոր էր դառնում։ Ընդհանրացնելով Կովկասյան բուրժուական նացիոնալիզմի անցյալ և ապագա վարքագիծը, Ստ. Շահումյանը նշում էր, որ Կովկասում ռևոլյուցիայի ամենաոխերիմ թշնամին միշտ եղել է ու կմնա նացիոնալիզմը։ Հայ իրականության մեջ գոյություն ունեցող բուրժուա-նացիոնալիստական պարտիաների և խմբերի մեջ ամենից ազդեցիկը և վտանգավորը դաշնակների ավանտյուրիստական պարտիան էր, որը միշտ հավատարիմ լինելով բուրժուազիային և միջազգային իմպերիալիզմին, երբեմն սքողվում էր նաև «աշխատավորական», «սոցիալիստական» անունների տակ, դրանով իսկ դրսևորելով նաև իր սոցիալ-նացիոնալիստական էությունը։ Հեղինակը գիտական անհրաժեշտ խորությամբ ցույց է տալիս դաշնակների, սպեցիֆիկների և բուրժուա-նացիոնալիստական այլ պարտիաների ու խմբերի հակաժողովրդական էությունը, հիմնավորապես ապացուցում է, որ նրանք կոչված էին բթացնելու ռևոլյուցիոն շարժման հորձանուտը մտած հայ աշխատավորների դասակարգային գիտակցությունը։

Հեղինակը միշտ չի վարվել, քննարկվող ժամանակաշրջանում հնչակյան մանրբուրժուական, նացիոնալիստական պարտիայի գործունեության մեջ տեսնելով «որոշ սոցիալիստական երանգ» (էջ 219)։ Հեղինակը լավ գիտե, իհարկե, որ բոլշևիկները երբեք էլ չեն շփոթել կոմպրոմիսները իդեական միաձուլման հետ և, ի շահ տվյալ ժամանակի խնդիրների լուծման, չեն մոռացել անցած էտապների գաղափարական սուր պայքարը։ Գնահատելով մեր ժողովրդին հայկական նացիոնալիզմի հասցրած մեծագույն աղետները առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, Ստ. Շահումյանը 1916 թ. գրում էր. «Ինչ տվեց հայ ժողովրդին հնչակյան-դաշնակցական քաղաքականությունը, ինչ բարիքներ ստեղծեց նա հայ ազգի համար։

Միայն դժբախտություն, կոտորածներ ու ավերումներ» (Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, էջ 407—408)։ Եվ այս ամենից հետո վերապահումներ անել հնչակյանների ինչ-որ «սոցիալիստական երանգի» մասին, առնվազն անհասկանալի է, հակասական։

Ցանկանում ենք հեղինակի ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ քննարկվող ժամանակաշրջանի հարցերի հետագա գիտական մշակման պրոցեսում առավելապես ուշադրություն դարձվի բուն Հայաստանի բոլշևիկյան կազմակերպություններին և ռևոլյուցիոն շարժմանը վերաբերող փաստերի հետագա հայտնաբերմանը։ Պարզ է, որ պատմական այդ շրջանում նույնպես շարժումը շատ ավելի զորեղ է եղել, քան նրա արտացոլումը արխիվային նյութերում, մամուլում, գրականության մեջ, հիշողություններում։

Հեղինակը պետք է խուսափի տեղ-տեղ նկատվող ընդհանուր (համառուսական, համատնդրկովկասյան) և կոնկրետ (բուն Հայաստանին վերաբերող) հարցերի քննարկման համամասնության խախտումից՝ հօգուտ ընդհանուրի։

Դրական է, որ ընկ. Արզումանյանը հաճախ խուսափում է շարադրման շաբլոն ոճից։ Նրա լեզուն պարզ է և սահուն։ Սակայն ցանկալի է, որ նա էլ ավելի հոգատարությամբ մշակի իր ոճը և խուսափի որոշ, ոչ տեղին արտահայտություններից։ Լավ կլիներ, եթե աշխատությունը ունենար անվանացանկ։

Մ. Վ. Արզումանյանի մեր կողմից համառոտակի քննարկված աշխատությունը ամբողջությամբ վերցրած գիտական լուրջ գործ է։

Հ. ՄԵԼԻՔՅԱՆ